ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 40

<<ԲԻՈՏԵԿ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետով,Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետով. որոշում եմ.

1. <<ԲԻՈՏԵԿ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /հիմք 15022019-07-0055 վկայական,ծածկագիր 07-009-0117-0101/ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողամասին տրամադրել հասցե՝

   Մարզ Կոտայք համայնք Ակունք գյուղ Ակունք Կենտրոնական խճուղի 124:

2.Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 թ. 06
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 41

ՊԵՐՃ ՎԱԶԳԵՆԻ ՈՍԿԵՐՉՅԱՆԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

<Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N660 որոշման հավելվածի 7-րդ կետի, հիմք ընդունելով Պերճ Վազգենի Ոսկերչյանի կողմից ներկայացրած նախագծային փաստաթղթերը և դիմումը որոշում եմ՝

1. Համաձայնեցնել կառուցապատող՝Պերճ Վազգենի Ոսկերչյանիի կողմից ներկայացրած <<ՍԵԳԱՍՏ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից կազմված նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Ակունք համայնքի Նոր գյուղ բնակավայրի 226-րդ թաղամասի թիվ 47 հասցեի՝ ծածկագիր՝07-049-0226-0047, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում բնակելի տան, ավտոտնակի և պարսպի կառուցման համար:

2. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարությունը սկսելուց 3 օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարությունը սկսելու վերաբերյալ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2020 թ. 07
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 42

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ 8 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, որոշում եմ

1. Համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 16-ի <<Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասին հասցե տրամադրելու մասին >> թիվ 8 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետի <<17/2>> թվերը փոխարինել 17/1/1 թվերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 20թ. 07
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 43

ԶՈՀՐԱԲ ՆՈՐԱՅՐԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարմ 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի, հիմք ընդունելով Զոհրաբ Նորայրի Սարգսյանի կողմից ներկայացրած նախագծային փաստաթղթերը և դիմումը որոշում եմ՝

1. Համաձայնեցնել կառուցապատող՝ Զոհրաբ Նորայրի Սարգսյանի կողմից ներկայացրած <<ԹԻՐԵՆՍ>> ՍՊԸ-ի կողմից կազմված նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Ակունք համայնքի Ակունք բնակավայրի Կենտրոնական խճուղի թիվ 126 շինությունը վերակառուցելու համար :

2.Շինարարական աշխատանքները կատարել նախագծի համաձայն:

3. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարությունը սկսելուց 3 օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարությունը սկսելու վերաբերյալ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 20թ. 07
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 44

ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի19 N 843-Ն որոշման, հիմք ընդունելով Գեղամ Սարգսի Համբարձումյանի կողմից ներկայացված հայտը ՝ որոշում եմ .

1.Ակունքի համայնքում մանրածախ առևտրով զբաղվող Կոտայք վարչական բնակավայրի բնակիչ Գեղամ Սարգսի Համբարձումյան անհատ ձեռնարկատիրոջը տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 20թ. 02
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 45

<<ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԶԻԶՅԱՆ>> ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի19 N 843-Ն որոշման, հիմք ընդունելով <<Ալեքսանդր Ազիզյան>> ԱՁ տնօրեն Վահե Օհանյանի կողմից ներկայացված հայտերը. որոշում եմ.

1.Տրամադրել << Ալեքսանդր Ազիզյան Էդիկի>> անհատ ձեռնարկատիրոջը Ակունք համայնքի Ակունք գյուղի Եկեղեցու փողոց թիվ 10 հասցեում 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում.

1) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն,

2) ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 20 թ. 07
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 46

ԿԱՐԱՊԵՏ ԺՈՐԺԻԿԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Աշխատանքային օրենսգրքի» 159-րդ հոդվածի ,հիմք ընդունելով 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N 28 աշխատանքային պայմանագիրը և Կարապետ Ժորժիկի Թադևոսյանի դրմումը, որոշում եմ.

1. Տրամադրել Ակունքի համայնքապետարանի աշխատանքային պայմանագրով աշխատող Կարապետ Ժորժիկի Թադևոսյանի 2019թվականի ամենամյա արձակուրդը 20 աշխատանքային օր՝ փետրվարի 10-ից մինչև 2020 թվականի մարտի 6-ը ներառյալ :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2020թ. փետրվարի 07
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 47

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Ակունք համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 61-Ն որոշման 2-րդ կետի , որոշում եմ՝

Համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում .

1. Համայնքի բյուջեի 01 բաժնի 01 խմբի 01 դասի <<Օրենսդիր, գործադիր մարմիններ, պետական կառավարում>> ծրագրի

ա) 5113 հոդվածից 2 558 900 դրամ տեղափոխել 5122 հոդված:

բ) 5134 հոդվածից 185 400 դրամ տեղափոխել 5122 հոդված:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2020թ. փետրվարի 10
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 48

ԱՆՈՒՇ ԱՇՈՏԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 18-ի թիվ 31 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջներով, , հիմք ընդունելով 2020 թվականի փետրվարի 10-ի կարիքի գնահատման թիվ 5 արձանագրությունը և Ակունք համայնքի Կապուտան բնակավայրի բնակիչ Անուշ Աշոտի Մելքոնյանի դիմումը, որոշում եմ՝

1.Ակունք համայնքի բնակիչ Անուշ Աշոտի Մելքոնյանին տրամադրել ֆինանսական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2020 թ.
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 49

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3,33 և 34-րդ կետերով և հաշվի առնելով որ Ակունք համայնքի Կոտայք գյուղում գտնվող (կցվում են հողամասի և շինության հատակագծերը) համայնքային սեփականություն հանդիսացող 399.7քառ.մետր մակերեսով բնակավայրերի նշանակության հողում ինքնակամ կառուցված 9.26 քառ.մետր մակերեսով պարիսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հաշվի առնելով, որ կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1. Ակունք համայնքի Կոտայք գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 399,7քառ.մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի այլ հողի գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:
2. Ինքնակամ կառուցված 9.26 քառ.մետր մակերեսով պարիսպը համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականության իրավունքը:
3. 399.7քառ.մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման առանձնացված միավորին տրամադրել հասցե՝մարզ Կոտայք, համայնք Ակունք գյուղ Կոտայք 11-րդ փողոց 15/1:
4. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
5. Կառույցի նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում կառույցը ձեռք բերելու նպատակով գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած անձին՝Սարգիս Հենրի Շահբազյանին:
6. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20__ թ. _____ __ ____

գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 50

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ակունքի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Նաիրի Ռուբիկի Թադևոսյանը, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, <<Հողի հարկի մասին>> օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2020-ի հունվարի 10-ին <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> ենթակետի հիմքով Ակունքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կադաստրի Կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքում գտնվող 0.1029հա, 0.0207 հա, 0.2228 հա, 0.1117 հա, 0.0246 հա, 0.58 հա, 0.13 հա մակերեսներով հողամասերը հանդիսանում են քաղաքացի Նաիրի Թադևոսյանի սեփականությունը, որոնք <Հողի հարկի մասին> օրենքով հանդիսանում են հարկվող օբյեկտներ: 2008-2019թթ ժամանակահատվածի համար քաղաքացի Նաիրի Թադևոսյանի հողի հարկը վճարելու պարտավորությունը կազմում է 123.264 ՀՀ դրամ, որից ապառք՝ 85.418 ՀՀ դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ 37.846 ՀՀ դրամ:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում Գոռ Բաբայանը հրավիրվել է վարչական վարույթի լսումների, որին մասնակցելու նպատակով վերջինս պատշաճ ծանուցվել է 04.02.2020թ.: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Հողի հարկի մասին>> օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <Հողի հարկի մասին> օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն հարկային օրենսգրքի 447 հոդվածի և համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող <Հարկերի մասին> օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող <Հարկերի մասին> օրենքի 29.1 հոդվածի 1-ին մասի՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Հողի հարկի մասին> օրենքի 1-ին, 16-րդ,իրավահարաբերության ծագման պահին գործող <Հարկերի մասին> օրենքի 29.1-ին, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին > օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ որոշում եմ

1. Քաղաքացի Նաիրի Ռուբիկի Թադևոսյանից հօգուտ Ակունքի համայնքի բյուջեի գանձել 123.264 ՀՀդրամ, որից 85.418 ՀՀ դրամ, որպես հողամասի համար վճարման ենթակա հողի հարկի գումար, 37.846 ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում բողոքարկվել վարչական կարգով՝ Ակունք համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության Նախարարության Դատական Ակտերի Հարկադիր Կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ակունքի համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2020 թ. փետրվարի 10-ին

Ակունք համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 51

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ակունքի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Նարեկ Պարգևի Թադևոսյանը, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, <<Հողի հարկի մասին>> օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2020-ի հունվարի 10-ին <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> ենթակետի հիմքով Ակունքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կադաստրի Կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքում գտնվող 0.26հա, 0.73 հա, 0.16 հա, 1.02 հա, 0.14 հա, 0.34 հա, 0.08 հա, 0.0828 մակերեսներով հողամասերը հանդիսանում են քաղաքացի Նարեկ Պարգևի Թադևոսյանի սեփականությունը, որոնք <Հողի հարկի մասին> օրենքով հանդիսանում են հարկվող օբյեկտներ: 2008-2019թթ ժամանակահատվածի համար քաղաքացի Նարեկ Պարգևի Թադևոսյանի հողի հարկը վճարելու պարտավորությունը կազմում է 394.094 ՀՀ դրամ, որից ապառք՝ 270.767 ՀՀ դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ 123.327 ՀՀ դրամ:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում Նարեկ Պարգևի Թադևոսյանը հրավիրվել է վարչական վարույթի լսումների, որին մասնակցելու նպատակով վերջինս պատշաճ ծանուցվել է 04.02.2020թ.: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Հողի հարկի մասին>> օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <Հողի հարկի մասին> օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն հարկային օրենսգրքի 447 հոդվածի և համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող <Հարկերի մասին> օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող <Հարկերի մասին> օրենքի 29.1 հոդվածի 1-ին մասի՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Հողի հարկի մասին> օրենքի 1-ին, 16-րդ,իրավահարաբերության ծագման պահին գործող <Հարկերի մասին> օրենքի 29.1-ին, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին > օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ որոշում եմ

1. Քաղաքացի Նարեկ Պարգևի Թադևոսյանից հօգուտ Ակունքի համայնքի բյուջեի գանձել 394.094 ՀՀդրամ, որից 270.767 ՀՀ դրամ, որպես հողամասի համար վճարման ենթակա հողի հարկի գումար, 123.327 ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում բողոքարկվել վարչական կարգով՝ Ակունք համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության Նախարարության Դատական Ակտերի Հարկադիր Կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ակունքի համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2020 թ. փետրվարի 10-ին

Ակունք համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 52

ՇԱՀԵՆ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 18-ի թիվ 31 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջներով, , հիմք ընդունելով 2020 թվականի փետրվարի 11-ի կարիքի գնահատման թիվ 6 արձանագրությունը և Ակունք համայնքի Ակունք բնակավայրի բնակիչ Շահեն Մնացականի Հարությունյանի դիմումը, որոշում եմ՝

1.Ակունք համայնքի բնակիչ Շահեն Մնացականի Հարությունյանին տրամադրել ֆինանսական օգնություն՝ 50 000 (հիսուն հազար) դրամ :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2020թ. փետրվար 11
գ. Ակունք